Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սպիտակ համայնքի ավագանու
2021թ. դեկտեմբերի 20-ի թիվ 2 -Ա որոշման

ԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի նորընտիր ղեկավարի երդման արարողության

1. Սույն կարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի նորընտիր ղեկավարի երդման արարողության կազմակերպման և իրականացման կարգը:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի նորընտիր ղեկավարի (այսուհետ՝ համայնքի ղեկավար) երդման արարողությունը տեղի կունենա 2021 թվականի դեկտեմբերի 23-ին, ժամը 11:00-ին, Սպիտակի համայնքապետարանի վարչական շենքում՝ նիստերի դահլիճում:

3. Համայնքի ղեկավարի երդման արարողության նախապատրաստման և անցկացման կազմակերպման պատասխանատուն «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկն է (այսուհետ՝ աշխատակազմ):

4. Համայնքի ղեկավարի երդման արարողությանը ներկա են գտնվում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցիչը (համաձայնությամբ), Լոռու մարզպետը, Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդը (համաձայնությամբ), հրավիրված պետական, եկեղեցական, մշակութային և հասարակական գործիչներ, համայնքի բնակիչներ:

5. Համայնքի ղեկավարի երդման արարողությունը վարում է աշխատակազմի քարտուղարը:

6. Աշխատակազմի քարտուղարը համայնքի ղեկավարին հրավիրում է ամբիոնի մոտ: Ամբիոնին մոտենալուց հետո՝ համայնքի ղեկավարն արտասանում է երդման տեքստը.

«Ստանձնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ղեկավարի պաշտոնը՝ երդվում եմ.

«Համայնքի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների:

Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին»:

7. Երդումն արտասանելուց հետո հնչում է Հայաստանի Հանրապետության օրհներգը: Համայնքի ղեկավարը ստորագրում է երդման տեքստի տակ, որն ի պահ է հանձնվում համայնքապետարանին:

8. Երդման տեքստը ստորագրվելուց հետո՝ նիստը վարողը ելույթի համար ձայնը տալիս է համայնքի ղեկավարին:

9. Ելույթի համար տրվում է մինչև 10 րոպե ժամանակ:

10. Ողջույնի խոսքերով կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Լոռու մարզպետարանի, Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի ներկայացուցիչները, ինչպես նաև կարող են հրապարակվել ուղերձներ:

11. Երդման արարողությունից և ողջույնի խոսքերից հետո աշխատակազմի քարտուղարը հայտարարում է համայնքի ղեկավարի երդման արարողության ավարտի մասին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ